ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1992թ. փետրվարի 7-ին Նիդեռլանդների Մասստրիխ քաղաքում Եվրոպական 12 պետություններ /Բելգիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Հունաստան, Դանիա, Իռլանդիան, Իսպանիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Պորտուգալիա, Ֆրանսիա/ ստորագրեցին համաձայնագիր Եվրոպական Միության հիմնադրման վերաբերյալ, որն ուժի մեջ մտավ 1993թ. նոյեմբերի 1-ին: Շուրջ մեկ ու կես տասնամյակ անց Եվրոպական Միությունը վերածվեց աշխարհի խոշոր ինտեգրացիոն խմբավորումներից մեկը, որը ներկայումս համաշխարհային քաղաքականության մեջ առանցքային նշանակություն ունեցող միջազգային կառույցներից մեկն է և ունի իր վճռորոշ ձայնի իրավունքը միջազգային այնպիսի հեղինակավոր կազմակերպություններում, ինչպիսիք են Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, Միացյալ Ազգերի Կազմակերպության Անվտանգության խորհուրդը:

Այսօր Եվրոպական Միությունն ունի 27 անդամ պետություն՝ 4միլիոն քառ. կմ տարածքով, 495 միլիոնի հասնող բնակչությամբ: Միջազգային առևտրում Եվրոպական Միության բաժինն ամենամեծն է, նրան է պատկանում համաշխարհային հարստության մեկ չորրորդը: Բնականաբար Եվրոպական Միության տնտեսական հզորությունը նպաստեց միջազգային հարաբերություններում և ժամանակակից աշխարհում վերջինիս դերի ու դիրքի մեծացմանը, ինչի մասին վկայում էր դեռևս 2003թ.-ի դեկտեմբերին Եվրոպական Միության կողմից ընդունված «Ապահով Եվրոպա՝ բարելավված աշխարհում» վերտառությամբ եվրոպական անվտանգության ռազմավարությունը, որտեղ մասնավորապես նշվում էր, որ. «Եվրոպական Միությունը հանդիսանում է լուրջ դերակատար համաշխարհային անվտանգության և բարելավված աշխարհ ստեղծելու հարցում, քանզի ոչ մի պետություն ի զորու չէ միայնակ, սեփական ուժերով պայքարել համաշխարհային մարտահրավերների և սպառնալիքների դեմ, ինչպիսիք են միջազգային ահաբեկչությունը, տարածաշրջանային հակամարտությունները, կազմակերպված հանցագործությունները, պետական կառավարման համակարգում առկա բացթողումները և այլն»:[1] Վերջիններս կարող էին դառնալ լուրջ սպառնալիք Եվրոպայի համար, մասնավորապես Եվրոպական Միության վերջին ընդարձակումներից հետո:

---

[1] A secure Europe in a better world./European Security Strategy.,Brussels/,12December2003/., Եվրոպական Միության պաշտոնական կայք., www.europa.eu.int

Ինչպես հայտնի է 2004թ. տեղի էր ունեցել Եվրոպական ինտեգրացման պատմության մեջ ամենամեծ ընդլայնումը, երբ Եվրոպական Միության անդամ դարձան 10 արևելաեվրոպական և բալթյան հանրապետություններ /Հունգարիա, Լեհաստան, Սլովակիա, Չեխիա, Սլովենիա, Լատվիա,Լիտվա, Էստոնիա/, ինչպես նաև Կիպրոսը և Մալթան, 2007թ.՝ Ռումինիան և Բուլղարիան: Արդյունքում Եվրոպական Միության հարևանությամբ հայտնվեցին այնպիսի պետություններ, որոնց բնորոշ էր անկայուն քաղաքական իրադրությունը, թույլ տնտեսությունը, համատարած աղքատությունը, գործազրկության բարձր մակարդակը,չկարգավորված հակամարտությունների առկայությունը, որոնք կարող էին դառնալ Եվրոպական Միության անվտանգությանը սպառնացող լուրջ խնդիրներ, ինչպես օրինակ անօրինական էմիգրացիան, ահաբեկչությունը և այլն: Այդ իսկ պատճառով Եվրոպական Միությունը շահերից էր բխում իր հարևանների հետ հարաբերություններում մշակել նոր ռազմավարություն, որը հնարավորություն կտար իր հարևանությամբ ունենալ լավ կառավարվող պետությունների օղակ ,ինչպես նաև վերջիններիս հետ հաստատել կայուն հարաբերություններ՝ խուսափելու համար Եվրոպական մայրցամաքում նոր բաժանարար գոտիների հանդես գալուց :

Դեռևս 2002թ.-ին Եվրապական Միության հարևանների հետ հարաբերություններում ի հայտ էր եկել Նոր հարևանների նախաձեռնությունը (New Neighbours Initiative), որը հիմնականում նախատեսված էր Միության արևելյան հարևանների՝ Մոլդովայի, Բելոռուսի, Ուկրաինայի և Ռուսաստանի համար: Հետագայում այս նախագծի հիման վրա կազմվեց և 2003թ. մարտի 11-ին ներկայացվեց առավել ընդգրկուն և համապարփակ նախագիծ,որն ստացավ «Ընդարձակ Եվրոպա - հարևանություն.արևելյան և հարավային հարևանների հետ հարաբերությունների նոր շրջանակներ» /Wider Europe – Neighbourhood: A New Framework for Relations with our Eastern and Southern Neighbours./անվանումը, որտեղ հարևանների թվին, բացի Ուկրաինայից, Բելոռուսից, Մոլդովայից և Ռուսաստանից դասվեցին նաև մի շարք միջերկրածովյան պետություններ՝ Ալժիրը, Եգիպտոսը, Իսրայելը, Հորդանանը, Լիբանանը, Լիբիան, Սարոկկոն, Պաղեստինի ինքնավարությունը, Սիրիան և Թունիսը.[2]

Եվրոպական Հարևանության Քաղաքականությունը նոր հեռանկարներ և լայն հնարավորություններ էր բացում Եվրոպական Միության և հարևան պետությունների հարաբերություններում: Եվրոպական Հանձնաժողովի նախկին նախագահ Ռոմանո Պրոդիի խոսքերով Եվրոպական Հարևանության

---

[2] Wider Europe – Neighbourhood: A New Framework for Relations with our Eastern and Southern Neighbours. Commission Communication COM (2003), 104 final, 11/03/03. //http.ec.europa.eu/world/enp/policy_en.htm

Քաղաքականության շրջանակներում Եվրոպական Միությունը իր հարևաններին՝ Ռուսաստանից ու Մարոկկոյից մինչև Հարավային Կովկասի հանրապետություններ առաջարկում էր «սերտ քաղաքական և տնտեսական համագործակցություն.... Ամեն ինչ, բացի անդամակցությունից կառույցներում»:[3] Համագործակցությունը ներառում էր այնպիսի ոլորտներ, ինչպիսիք էին արտաքին քաղաքականությունը և անվտանգությունը/ տարածաշրջանային և միջազգային հարցերը,հակամարտությունների կասեցում, ճգնաժամերի կարգավորում, ահաբեկչության և մասսայական ոչնչացման զենքերի տարածման դեմ պայքար/, տնտեսական և սոցիալական զարգացման քաղաքականության հարցեր,արդարադատություն, ներքին գործեր,ազատ առևտրի համար պայմանների ստեղծում և այլն:

Հարավային Կովկասի հանրապետությունները՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը նախապես ընդգրկված չէին Եվրոպական Հարևանության Քաղաքականության մեջ, սակայն ավելի ուշ 2004թ. հունիսին Եվրոպական Հանձնաժողովը՝ հաշվի առնելով Հարավային Կովկասում Եվրոպական Միության հատուկ ներկայացուցչի առաջարկները, որոշում ընդունեց Հայաստանին, Վրաստանին և Ադրբեջանին հրավիրել մասնակցելու Եվրոպական Հարևանություն Քաղաքականությանը:[4] Այդ որոշմանը նախորդել էր 2003թ.-ի նոյեմբերին Վրաստանում տեղի ունեցած «Վարդերի հեղափոխությունը», որից հետո ակտիվացավ արևմուտքի, այդ թվում նաև Եվրոպական Միության ընդգծված հետաքրքրությունը Հարավային Կովկասի տարածաշրջանի նկատմամբ: Նույն թվականի դեկտեմբերին ընդունված եվրոպական անվտանգության ռազմավարության մեջ արդեն նշվում էր, որ այսուհետ Եվրոպական Միությունը Հարավային Կովկասում պետք է «դրսևորի առավել ակտիվ և ընդգծված դերակատարություն:»[5]

Անդրադառնալով Հարավկովկասյան հանրապետությունների հետ Եվրոպական Միության հարաբերություններին, պետք է նշել, որ դրանք սկիզբ էին առել դեռևս 1991թ.՝ վերջիններիս անկախություն ձեռք բերելուց հետո: Հարավկովկասյան հանրապետությունները ընդգրկվեցին Եվրոպական Միության Tacic/Technical Assistance for the Commonwealth of Independent States/, ECHO /Մարդասիրական օգնություն/, Պարենային ապահովության /Food Security Programme/FSP/, Ժողովրդավարության և Մարդու Իրավունքների

---

[3] *Prodi R.* The future of the Union of 25. Seminares Sociales de France. Lille, 23 September 2004. SPEECH/04/417.

[4] European Neighborhood Policy. Strategy paper., Brussels 12.5.2004 .//http.ec.europa.eu/ world/ enp/policy_en.htm

[5] A secure Europe in a better world./European Security Strategy., Brussels/, 12December2003/., www.europa.eu.int

Եվրոպական նախաձեռնության /EIDHR/ և մի շարք այլ ծրագրերի մեջ՝ ստանալով տեխնիկական և ֆինանսական աջակցություն Եվրոպական Միության կողմից:

1996թ. Եվրոպական Միության և հարավկովկասյան հանրապետությունների հարաբերությունները թեակոխեցին զարգացման նոր փուլ, երբ Լյուքսեմբուրգում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների նախագահների և Եվրոպական Միության ղեկավարության միջև ստորագրվեցին Գործընկերության և Համագործակցության Համաձայնագրեր/ԳՀՀ/, ըստ որոնց համագործակցությունը Եվրոպական Միության և հարավկովկասյան հանրապետությունների միջև ընդգրկելու էր գրեթե բոլոր ոլորտները, բացի պաշտպանությունից՝ ներառելով ժողովրդավարության հաստատում, տնտեսության զարգացում՝ մասնավորապես շուկայական տնտեսության անցման գործընթացները, երկողմանի առևտրա-տնտեսական հարաբերությունների հաստատում, օրենքի իշխանության հաստատում, ինչպես նաև օրենսդրական, սոցիալական, ֆինանսական, տնտեսական, գիտական, տեխնիկական, մշակութային և այլ բնագավառներ:

2004թ.-ին Հարավային Կովկասի հանրապետությունների ընդգրկումը Եվրոպական Հարևանության Քաղաքականության մեջ նոր որակական և իրավական աստիճանի բարձրացրեց Եվրոպական Միության և Հարավկովկասյան հանրապետություններ հարաբերությունները:

Եվրոպական Միության հետաքրքրությունը Հարավային Կովկասի և ընդհանրապես Սևծովյան տարածաշրջանի նկատմամբ ունի մի քանի պատճառներ. 2004թ.-ին Եվրոպական Միության ընդարձակումը և 2007թ.-ին 2 սևծովյան պետությունների՝ Բուլղարիայի և Ռումինիայի անդամակցությունը, ինչպես նաև Թուրքիայի հետ շարունակվող բանակցությունները անդամակցության վերաբերյալ, հարավկովկասյան տարածաշրջանը դարձնում է Միության անմիջական հարևան: Կան մի շարք գործոններ որոնցով պայմանավորված է Եվրոպական Միության մեծացող հետաքրքրությունը Հարավային Կովկասի նկատմամբ: Իհարկե կարևոր հանգամանքը աշխարհագրական գործոնն է՝ այսինքն Եվրոպական Միությունն - Հարավային Կովկաս անմիջական հարևանության գործոնը: Բացի դա Եվրոպական Միության նոր անդամ պետությունները՝ մասնավորապես բալթյան հանրապետությունները Հարավային Կովկասի հանրապետությունների հետ ունեին սերտ տնտեսական և քաղաքական կապեր:Այստեղ կարևոր դեր էր խաղում նաև դեմոգրաֆիական գործոնը: Հատկապես վերջին տասնամյակի ընթացքում հարավկովկասյան հանրապետություններում լուրջ խնդիր էր դարձել արտագաղթը՝ հիմնականում եվրոպական երկրներ:

Սակայն Հարավային Կովկասը Եվրոպայի համար առավել կարևոր է էներգետիկ անվտանգության տեսանկյունից: Հարավային Կովկասը հատկապես սևծովյան հատվածը այսօր այն տարածաշրջաններից մեկն է, որը հանդիսանում է էներգակիրների տրանզիտային արտահանման կարևորագույն միջանցքներից մեկը: Ունենալ իր ազդեցության չափաբաժինը Հարավային Կովկասում հնարավորություն կտա Եվրոպական Միությանը անմիջական կապ հաստատել Կասպյան ավազանի էներգակիրների հետ: Եվրոպական Միությունը աշխարհի էներգակիրների / գազ և նավթ/ խոշորագույն ներմուծողներից և սպառողներից մեկն է :ԵՄ ներմուծում է էներգակիրների 50%-ը որից 25%՝ Ռուսաստանից ,որը 2030թ. կարող է հասնել 45%, և 45% Մերձավոր արևելքից, որը 2030թ. կարող է հասնել մինչև 70%:

Հաշվի առնելով Մերձավոր Արևելքում տիրող անկայուն իրավիճակը և այն հանգամանքը, որ էներգետիկ գործոնը վերջին շրջանում դառնում է Ռուսաստանի արտաքին քաղաքականության լուրջ գործիք /վերջին իրադարձությունները Ուկրաինայի և Վրաստանի հետ կապված/ Եվրապական Միությունը պետք է հոգ տանի իր էներգետիկ անվտանգության մասին : Այս պարագայում կարևորություն է ձեռք բերում Հարավային Կովկասը և Կասպյան ավազանը:Ինչը հնարավորություն կտա Եվրոպական Միությանը թուլացնել էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից:

Եվրոպական Հարևանության Քաղաքականության շրջանակներում Հարավային Կովկասի նկատմամբ գերիշխում է տարածաշրջանային մոտեցումը: Մինչդեռ այդ հանրապետություններից յուրաքանչյուրն ունի իր քաղաքական և տնտեսական ուրույն բնութագիրը, իր խնդիրները, ըստ որոնց էլ պետք է կատարվեր հարաբերությունների կառուցումը այդ հանրապետությունների և Եվրոպական Միության միջև: Սակայն վերջինս նախընտրեց դիտարկել այն որպես մեկ միասնական տարածք, քանզի այստեղ առկա են խնդիրներ, որոնք ունեն տարածաշրջանային նշանակություն և կարևորվում էր այդ հանրապետությունների միջև տարածաշրջանային համագործակցության հաստատումը: Սակայն Եվրոպական Միության կողմից առաջ քաշված տարածաշրջանային նախագծերը ամենևին չնպաստեցին համագործակցության հաստատմանը հարավկովկասյան հանրապետությունների միջև, ավելին Հայաստանի Հանրապետությունը իր հարևանների ակտիվ միջամտությամբ մեկուսացվեց այդ ծրագրերից, որի վառ արտահայտությունը Բրյուսելի կողմից գրեթե միաժամանակ առաջ քաշված TRACECA /Transport Corridor Europe- Caucasus- Asia/, և INOGATE /Interstate Oil and GazTransport to Europe/ ծրագրերն էին, որոնցից առաջինը նախատեսում էր Եվրոպա- Ասիա- Կովկաս տրանսպորտային միջանցքի ստեղծումը, իսկ երկրորդը՝ տարածաշրջանում նավթա և գազային արտահանող համակարգերի ինտեգրացումը

և դրանց արտահանման ոլորտում օժանդակությունը: Հայաստանը, ընդգրկված լինելով այս նախագծերի մեջ, գործնականում դուրս մնաց այդ նախագծերից:

Եվրոպական Հարևանության Քաղաքականության շրջանակներում Եվրոպական Միության և հարևան պետությունների հարաբերությունների հիմնաքարը այսպես կոչված Գործողությունների ծրագրերն են,որոնք հիմնված էին ավելի վաղ Եվրոպական Հանձնաժողովի կողմից ներկայացված «Երկրի զեկույցների» վրա: Գործողությունների պլանները հիմանականում վերաբերում են 4 հիմնական ոլորտների

- արտաքին և անվտանգության քաղաքականություն
- տնտեսություն և սոցիալական քաղաքականություն
- առևտուր
- արդարադատություն և ներքին գործեր

Հարավային Կովկասի հանրապետությունների հետ Գործողությունների ծրագրերը ստորագրվեցին միաժամանակ 2006թ.-ի նոյեմբերին՝ Բրյուսելում: Գործողությունների 5-ամյա պլանները Եվրոպական Միության Արտաքին կապերի և հարևանության քաղաքականության եվրոկոմիսար Բենիտա Ֆերերո – Վալդների բնորոշմամբ յուրաքանչյուր պետության համար անհատական էին,սակայն միևնույն ժամանակ իրենց վրա կրում էին տարածաշրջանային իրադրության դրոշմը:[6]

Եվրոպական Հարևանության գործընկեր երկրները պարտավորվում էին իրականացնել բարեփոխումներ Եվրոպական Միության կողմից տարիների ընթացքում մշակված արժեքային համակարգի համապատասխան՝ ժողովրդավարության կայացման, մարդու իրավունքների պաշտպանության, տնտեսական և սոցիալական քաղաքականության ոլորտներում:

Այս առումով Եվրոպական Միության կարևորագույն արժեքներից մեկը ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանությունն էր , որը առաջնային տեղ էր զբաղեցնում հարևան պետությունների հետ կնքված Գործողությունների պլաններում: Հարավային Կովկասի հանրապետությունների համար հատկապես կարևոր էր օգտագործել այս ոլորտում Եվրոպական Միության կողմից կուտակված փորձը՝ մասնավորապես ժողովրդավարական կառույցների ուժեղացման,օրենքի իշխանության հաստատման ոլորտում՝ ներառելով դատական համակարգի բարեփոխումները և կաշառակերության և կոռուպցիայի դեմ պայքարը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը՝ համածայն այդ հանրապետությունների

---

[6] Commissioner Ferrero- Waldner to visit South Caucasus16/17February .http//europa.eu/ rapid/ pressReleasesAcction/

Եվրոպական Խորհրդի, Միացյալ Ազգերի Կազմակերպության և այլ միջազգային կառույցների առջև ստանձնած պարտավորությունների:[7]

Եվրոպական Միության կայացման գործընթացում ոչ երկրորդական դեր է ունեցել տնտեսական գործոնը, ինչը և շարունակում է մնալ Եվրոպական Միության հետագա զարգացման խթանիչ հանգամանք: Այդ իսկ պատճառով Եվրոպական Միությունը իր հարևան պետություններին առաջարկելով ընդարձակ համագործակցություն նաև տնտեսության ոլորտում, պետք է առաջադրեր իր արժեքային համակարգը նաև այս ոլորտում: Հարևան պետության կարգավիճակ ստացած պետությունները պարտավորվում էին իրականացնել տնտեսական բարեփոխումներ, ինչը կզարգացներ շուկայական հարաբերությունները, տնտեսությունը, մասնավոր սեկտորը, կմեղմացներ ներդրումային ոլորտը, պայմաններ կստեղծեր բիզնեսի զարգացման համար, այդ թվում նաև հարկային համակարգի բարեփոխման ճանապարհով, ինչը լայն հնարավորություններ կբացեր այդ հանրապետությունների համար ներթափանցել Եվրոպական Միության ներքին շուկա:

Գործողությունների ծրագրերը նախատեսում էին ավելի սերտ համագործակցություն Գործընկերության և Համագործակցության Համաձայնագրերի առաջադրած հիմնական ոլորտներում՝ ներառյալ համագործակցությունը ընդհանուր և անվտանգության քաղաքականության շրջանակներում, որը նախատեսում էր ընդհանուր անվտանգության սպառնալիքների դեմ, զանգվածային ոչնչացման զենքերի տարածման և զենքի անօրինական արտահանման դեմ պայքար:

Իհարկե Հարավային Կովկասի հանրապետությունների հետ հարաբերությունները կառուցելիս առաջնային նշանակություն ունի հակամարտությունների առկայությունը այս տարածաշրջանում: Ինչպես արդեն նշվել է 2003թ. Հարավային Կովկասում նշանակվեց Եվրոպական Միության հատուկ ներկայացուցիչ, որը կոչված էր նպաստելու հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացներին: Ինչի մասին բազմիցս նշել է Պիտեր Սեմնեբին : Մինչ այդ Եվրոպական Միության մասնակցությունը հակամարտությունների կարգավորման գործընթացին սահմանափակվում էր նրանով, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներից մեկը Ֆրանսիայի ներկայացուցիչն էր;

Եվրոպական Հարևանության Քաղաքականության շրջանակներում կնքված Գործողությունների պլաններում մեծ տեղ էր հատկացվում հակամարտություններ կարգավորմանը: Գործողությունների պլաններում առաջ էին քաշվում կոնկրետ քայլեր հակամարտությունների կարգավորման ուղղությամբ՝ դիվանագիտական ջանքերի ակտիվացում այդ թվում նաև Եվրոպական Միության հատուկ ներկայացուցչի միջոցով, փախստականներին, ներքին

[7] EU/Armenia.EU/azerbaijan. EU/Georgia Action Plans.//http.www.europe.eu./world/enp/

տեղահանված մարդկանց վերաբերյալ,ականազերծման և այլ հարցեր: Հակամարտությունների կարգավորման գործընթացին կարող էր անուղղակիորեն նպաստել տարածաշրջանային համագործակցության հաստատումը տարածաշրջանային հանրապետությունների միջև այդ իսկ պատճառով կորևորվում էր տարածաշրջանային համագործակցության հաստատումը:

Թեև այս հարցում Եվրոպական Միության մոտ բացակայում էր հստակ դիրքորոշումը: Նախքան 2003թ. Հարավային Կովկասում հատուկ ներկայացուցչի նշանակումը, Բրյուսելում երկարկարատև քննարկման առիթ էր դարձել այն հարցը, արդյոք պետք է Հարավային Կովկասում Եվրոպական Միության հատուկ ներկայացուցիչ նշանակել նախքան այս տարածաշրջանի վերաբերյալ հստակ ռազմավարության մշակումը, թե ռազմավարության ընդունումից հետո: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները Եվրոպական Միության կողմից այս հարցում հստակ դիրքորոշում չձևավորվեց:

Հարավային Կովկասի հանրապետությունների ընդգրկումը Եվրոպական Հարևանության Քաղաքականության մեջ նշանավորեց վերջիններիս և Եվրոպական Միության միջև հարաբերությունների նոր փուլի սկզբնավորումը,ինչը պայմանավորված էր Հարավային Կովկասի նկատմամբ Եվրոպական Միության աճող հետաքրքրությամբ: Միևնույն ժամանակ Հարավային Կովկասի հանրապետությունների համար ևս ինտեգրումը Եվրոպական կառույցներ համարվում էր արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը :

Եվրոպական Հարևանության Քաղաքականության շրջանակներում Եվրոպական Միության և Հարավային Կովկասի հանրապետությունների միջև կնքված Գործողությունների պլանները նախատեսում էին համագործակցություն 4 հիմնական ոլորտներում՝ արտաքին և անվտանգության քաղաքականություն, տնտեսություն և սոցիալական քաղաքականություն, առևտուր, արդարադատություն և ներքին գործեր: Այս բոլոր ոլորտներում հարավկովկասյան հանրապետությունները ստանձնում էին որոշակի պարտավորություններ. մասնավորապես տնտեսության և առևտրի ոլորտում բարեփոխումների իրականացումը Եվրոպական Միության չափանիշների համաձայն կարող էին դառնալ երաշխիք Միության ներքին շուկա ներթափանցելու համար: Հատկապես կարևորվում էր համագործակցության հաստատումը անվտանգության և արտաքին քաղաքականության ոլորտում: Այս առումով հատկապես կարևոր էր Հարավային Կովկասում հակամարտությունների կարգավորման գործընթացին Եվրոպական Միության մասնակցության հարցը, ինչը հատկապես նկատվեց Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Եվրոպական Միության միջև կնքված Գործողությունների պլաններում:

Փաստորեն Եվրոպական Միության և Հարավկովկասյան հանրապետությունների համագործակցությունը ընդգրկելով ներքին և արտաքին քաղաքա-